ԿՐԹԱԿԱՆ

ՓՈԽՎԵԼ ԵՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՅԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Վրաստանի հանրակրթական հաստատություններում փոխվել են առաջին դասարան գրանցվելու եւ դպրոց ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետները: Տեղեկությունը տարածում է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը:

Գերատեսչության տվյալներով, գրանցման առաջին փուլում Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ու խորհրդարանի կրթության եւ գիտության հանձնաժողովի համատեղ որոշմամբ, փոփոխություն է կատարվել «Հանրակրթության մասին» օրենքում՝ տարրական դասարանում ուսուցումն սկսելու տարիքի վերաբերյալ:

Հաշվի առնելով այս փոփոխությունը՝ 2022-2023 ուսումնական տարում սեպտեմբերի 16-ից հոկտեմբերի 1-ը վեց տարին լրացած երեխաների համար լրացուցիչ գրանցում պետք է կատարվի:

Ելնելով վերոնշյալից՝ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի՝ 2022 թվականի մարտի 4-ի N221866 հրամանի համաձայն, առաջին դասարանցիների գրանցման եւ դպրոց ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետները սահմանվել են հետեւյալ կերպ.

I փուլը կիրականացվի 2022 թվականի ապրիլի 20-28-ը: Այս ընթացքում դպրոցներում լրացուցիչ հաշվառում կտրամադրվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, ովքեր չեն կարողացել դպրոց ընդունվել գրանցման առաջին փուլի համար ի սկզբանե սահմանված ժամկետներում:

Առաջին փուլում գրանցվող երեխաների ծնողները պետք է դիմեն նախընտրած հանրակրթական դպրոց: Դպրոցի տնօրինությունը երեխային կգրանցի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (EMIS): Կրթության առանձնահատուկ կարիքը հաստատելու համար, ծնողը դպրոցում լրացնում է համապատասխան դիմում-հայտը, որից հետո երեխան գնահատվում է բազմամասնագիտական թիմի կողմից, եւ որոշվում է նրա կրթական կարիքը: Կրթության առանձնահատուկ անհրաժեշտության հաստատման դեպքում, դպրոցն ապահովում է աշակերտի ընդգրկումը համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Առաջին փուլում գրանցված երեխաների ծնողները 2022 թվականի ապրիլի 29-ից մինչեւ մայիսի 6-ը կկարողանան փաստաթղթերը ներկայացնել դպրոցներ: Կրթության հատուկ կարիք ունեցող երեխաների ծնողները հետագայում կկարողանան գրանցել իրենց երեխաներին:

II փուլ. Երկրորդ փուլում գրանցվելը հնարավոր կլինի մայիսի 10-20-ը, եւ դպրոցում կգրանցվեն այն երեխաները, որոնց

ա) քույր-եղբայրները սովորում են նույն դպրոցում,

բ) ծնողը/խնամակալը տվյալ հանրակրթական դպրոցի աշխատող է,

գ) ընտանիքի երկու եւ ավելի երեխաներ միաժամանակ հաճախելու են առաջին դասարան:

Այս փուլում գրանցումը հիմնված է ծնողի/օրինական խնամակալի կողմից հանրակրթական դպրոցներում ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման վրա: Գրանցումն ապահովում է հանրակրթական դպրոցը: Նշենք, որ երկրորդ փուլում հաշվառված երեխաների ծնողները պետք է համապատասխան փաստաթղթեր ներկայացնեն դպրոցներում հաշվառման համար սահմանված ժամկետներում:

III փուլ. Համընդհանուր գրանցումը կմեկնարկի 2022 թվականի մայիսի 24-ին եւ կտեւի մինչեւ հունիսի 15-ը:

Գրանցումը կկատարվի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի՝ register.emis.ge պաշտոնական կայքում: Գրանցումը տրամադրվում է ծնողի/օրինական խնամակալի կողմից:

Էլեկտրոնային եղանակով գրանցվող աշակերտի գրանցվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կներկայացվեն 2022 թվականի հունիսի 16-ից մինչեւ հունիսի 30-ը: Փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում, գրանցումն ավտոմատ կերպով կչեղարկվի:

IV փուլ. Դպրոցներում կիրականացվի 2022 թվականի հուլիսի 4-12-ը: Այն երեխաները, ովքեր չեն գրանցվել I, II եւ III փուլերում կամ ովքեր ցանկանում են փոխել իրենց գրանցումը, կգրանցվեն այս փուլում թափուր կամ ազատված տեղերի համար:

Չորրորդ փուլում սովորողի գրանցումն ապահովում է հանրակրթական դպրոցը՝ ծնողի/օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

Առաջին դասարան ընդունվելու փաստաթղթերը.

«Աշակերտի օրինական ներկայացուցչի դիմումը, որը պետք է ներառի օրինական ներկայացուցչի բնակության վայրի եւ հեռախոսահամարի մասին տեղեկատվություն, աշակերտի ծննդյան վկայականի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը եւ Վրաստանում կացության թույլտվության պատճենը»,- ասվում է կրթության եւ գիտության նախարարության հաղորդագրության մեջ:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը կոչ է անում ծնողներին՝ ուշադիր ծանոթանալ գրանցման ժամկետներին ու պայմաններին, որպեսզի իրենց երեխան կարողանա ժամանակին եւ անխափան մտնել դպրոց:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ՝ ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության հայտարարությամբ, այս տարի Վրաստանում 12-րդ դասարանցիները դպրոցը կավարտեն մայիսի 20-ին:



Ինչ վերաբերում է առաջին դասարանցիներին, ապա նրանց ուսումնական տարին կավարտվի մայիսի 27-ին, իսկ մյուս դասարանների աշակերտներինը՝ հունիսի 15-ին:

Բոլոր աշակերտները առաջին կիսամյակում հաճախել են ընդհանուր հաշվով 74 օր, իսկ երկրորդ կիսամյակում 12-րդ դասարանցիները կհաճախեն 79, առաջին դասարանցիները՝ 83, իսկ մնացած դասարանների աշակերտները՝ 96 օր:

ՍԿՍՎԵԼ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Ապրիլի 4-ից սկսվել է Վրաստանում ուսուցիչների ամենամյա մրցանակի հայտերի ընդունումը: Հայտերի ներկայացումը հնարավոր կլինի մինչեւ մայիսի 18-ը, www.tprize.ge կայքի միջոցով:

Վրաստանի Կրթության կոալիցիայի խորհրդի նախագահ Իրինա Խանթաձեի խոսքով, այս տարվա մրցույթը կնվիրվի ուկրաինացի կոլեգաներին.

Մրցույթի նպատակն է՝ եւս մեկ անգամ ցույց տալ, որ պատերազմական անելանելի իրավիճակում շատ կարեւոր է դպրոցի եւ ուսուցչի դերը ժողովրդավարական պետություն ունենալու համար:

Այս տարի ուսուցչի ազգային մրցանակային ֆոնդն ավելացել է: 2022 թվականի հաղթող ուսուցիչը «Գուդաուաձե-Պատարկացիշվիլի» հիմնադրամի կողմից կստանա 15 000 լարի, իսկ «Լիբերթի» բանկը յուրաքանչյուր եզրափակիչ փուլ անցած ուսուցչի կպարգեւատրի 5000 լարիով:

Մրցույթի գլխավոր հովանավորներն են «Գուդաուաձե-Պատարկացիշվիլի» հիմնադրամը եւ «Լիբերթի» բանկը: Աջակիցներն են՝ կրթության եւ գիտության նախարարությունը, Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը, Իլիայի պետական համալսարանը, EPAM Վրաստանը, Խորհրդատվական եւ վերապատրաստման կենտրոնը (ctc), Վրաստանի Առաջին ալիքը եւ «Մավերիկ» ընկերությունը (Digital-Creative Agency):

ԵՍ ՍՈՎՈՐՈՒՄ ԵՄ ԻՄ ԵՐԱՋԱԾ ԲՈՒՀՈՒՄ

ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ԹՈՒՐԸ ՉԻ ԿՏՐԻ, ԲԱՐԻ ԽՈՍՔԸ ԿՀԱՂԹԻ

Կյանքի բնականոն ռիթմի ապահովման ձգտումը Վրաստանի ազգային փոքրամասնություններին մղում է ավելի խորը ընկալել պետական լեզվի իմացության կարեւորությունն ու դրա առավելությունը: Այդ մղումը գնալով ամրանում է, եւ առանձնապես ուրախալի է, որ այն նկատվում է երիտասարդության համոզմունքներում:

Մեր զրուցակիցն է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու համալսարանի համակարգչային գիտություն ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող Դավիթ Թանյանը:

Սկսենք նրանից, որ Թանյանների գերդաստանը Վրաստանի Մառնեուլիի մունիցիպալիտետի հինավուրց Շահումյան ավանի բնիկներից է: Շահումյանում են ծնվել ընտանիքի ներկայիս երկկողմ պապ ու տատերը, նրանց զավակները եւ Դավիթ թոռը: Իմիջիայլոց, Դավիթն այն եզակի թոռներից է, ով, պապ ու տատի եւ գյուղի ավելի տարեցների հետ զրույցներից քաղված տեղեկությունների արդյունքում, կազմել է իրենց գերդաստանի տոհմածառը, որն ի դեպ ներառում է շուրջ յոթ սերունդ:

Պարզ է, թե ինչն է երիտասարդին դրդել այդ քայլին...

Սերն ու պատկառանքը նախնիների ու արմատների հանդեպ հավաստում է նաեւ մի այլ խոսուն փաստ: Լինելով Շահումյանի թիվ 2 ռուսական դպրոցի շրջանավարտ՝ Դավիթը լիարժեք տիրապետում է իր մայրենի հայերենին: Եվ տիրապետումը սոսկ գրագետ գրել-կարդալը, խոսելը չէ: Նա կապված է ազգային մշակույթին եւ սիրով ու հետաքրքրությամբ ընթերցում է հայ դասականներին՝ առանց որեւէ դժվարության հասկանալով կարդացածը:

Իսկ վրացերենին տիրապետելու անհրաժեշտության գիտակցումը Դավթի կյանքում կապված է մի հետաքրքիր նախապատմության հետ:

- Երբ 2008թ.-ին Շահումյանի մեր թիվ 2 ռուսական դպրոցին միացավ վրացական դպրոցը,- պատմում է Դավիթը,- տղաները՝ մերոնք եւ նորեկները, կռիվներ էին սարքում: Լեզվին լավ չտիրապետելու պատճառով, դասամիջոցներին նորեկների հետ անսպասելի վեճեր էին սկսվում: Կռիվների պատճառը թյուրիմացություններն էին. նրանց դիտողը կզգար, որ ստեղծված խառնաշփոթը իրականում իրար չհասկանալուց է, նրանց՝ վրացերեն, մեր՝ ռուս-հայերեն «բացատրություններից» ...

Մի օր էլ, տեսնելով հերթական անհասկանալի խառնաշփոթը, հիշեցի Վաչագան պապիս սիրած ասացվածքը՝ « Ուր թուրը չի կտրի, բարի խոսքը կհաղթի», եւ վճռականորեն սկսեցի միջամտել՝ ջանալով թյուրիմացությունը հնարավորինս շտկել: Իմացածս վրացերենով փորձեցի բացատրել ինչ-ինչոցը... Հետեւանքը սպասածից ավելին եղավ. վիճաբանողներիս մեջ մթնոլորտը խաղաղվեց, միանգամից իրար հասկացանք, եւ շուտով «ախոյաններս» դարձանք բարեկամներ: Ընկերներս էլ աստիճանաբար սկսեցին սովորել վրացերեն, իսկ մեր նոր ընկերները՝ հայերեն ու ռուսերեն:

Ահա այդ պահից էլ հասկացա, որ պետք է վրացերենս խորացնել եւ, ինչպես ասում են, գործի անցա: Ասեմ, որ դա ինձ համար առանձնակի խնդիր չէր, որովհետեւ մայրս՝ Թագուհի Թանյանը, մեր դպրոցի վրաց լեզվի ու գրականության ուսուցչուհին է. ափսոսում եմ, որ ավելի վաղ չէի մտածել այդ ուղղությամբ: Իհարկե, շատ օգնեց վրաց շրջապատը, ամենօրյա շփումները ընկերներիս հետ, ամռանը՝ ճամբար գնալը:

Այսօր ես աշխարհում հայտնի վրացական բուհի ուսանող եմ, ուսման պրոցեսն ինձ համար անցնում է հարթ, առանց որեւէ դժվարության՝ կապված վրացերենով բացատրվելու կամ դասախոսությունների ընկալման հարցերի հետ: Ավելին, սովորում եմ անվճար, 100 տոկոսանոց դրամաշնորհ ունեմ: Խոսում եմ անկաշկանդ, համոզված եմ, որ գնալով իմացածս կխորացնեմ ու կկատարելագործեմ: Լեզվական խնդիր չունենալու շնորհիվ՝ վարում եմ սեփական ինտերնետ էջս: Իդեպ, ունեմ այդ էջի հետ կապված սեփական ծրագրեր, ինչը, կարծում եմ, կօգնի՝ բուհն ավարտելուց հետո լավ աշխատանք գտնել: Ծրագրերս, ինչպես ասում եմ, շատ են. առաջնագծում նախ համալսարանն ավարտելն է, հետո՝ մնացածը, այդ թվում՝ եւ ընտանիք կազմելը:

Ուզում եմ՝ կյանքիս ընկերուհին լինի անհատականություն...

Եվ վերջում ավելացրեց.

- Ուրախ եմ, որ, մեր սիրելի «Վրաստան» թերթի շնորհիվ, ինձ առիթ ընձեռվեց շնորհակալություն հայտնել «1+4» կրթական նախագծի հեղինակներին: Շնորհիվ այդ նախագծի է, որ ես վստահ եմ նայում իմ ապագային...

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

COVID - 19

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ COVID-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ Է, ԹԵԵՎ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԴԻՄԱԿՆԵՐ ԿՐԵԼԸ ՄՆՈՒՄ Է ՊԱՐՏԱԴԻՐ

Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեի հայտարարությամբ, Վրաստանում համավարակային իրավիճակում նկատվում է դրական դինամիկա, նվազել են ինչպես վարակման, այնպես էլ՝ մահացության դեպքերը:

Ընթացիկ տարվա հունվար-փետրվար ամիսներին Վրաստանում անցավ կորոնավիրուսի «Օմիկրոն» շտամի տարածման վեցերորդ ալիքը: Վարակումների թիվը կտրուկ աճեց, ապա աստիճանաբար գրանցվեց դրա անկումը:

- Վերջին երկու շաբաթվա ընթացքում, չնայած պատվաստման շատ ցածր տեմպերին, Վրաստանում կորոնավիրուսից մահացության դեպքերը նվազագույնն են,- հայտարարեց Ամիրան Գամղրելիձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՉՈՐՐՈՐԴ ԴԵՂԱՉԱՓԸ՝ 50 ԵՎ ԱՎԵԼԻ ՏԱՐԻՔԻ ՈՒ ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի խոսքով, Վրաստանում արդեն մոտ 4000 մարդ ստացել է կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի լրացուցիչ՝ չորրորդ չափաբաժինը:

Նշենք, որ Վրաստանի Իմունականխարգելման խորհուրդը որոշում էր կայացրել 50-ն անց քաղաքացիներին պատվաստել կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի չորրորդ դեղաչափով, այսինքն՝ երկրորդ խթանիչ դոզայով:

- Քրոնիկական հիվանդություններ ունեցող 12 տարեկանից բարձր տարիքի քաղաքացիները նույնպես կարող են ընդունել կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի չորրորդ չափաբաժինը,- նշեց Թամար Գաբունիան:

Վերջին տվյալներով, Վրաստանում ընդհանուր առմամբ իրականացվել է 2 մլն 877 հազար 150 պատվաստում, որից 2 դեղաչափով պատվաստվել է 1 մլն 262 հազար 481, իսկ խթանիչ դեղաչափով՝ 246 341 մարդ:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 512 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 512 299 256-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 6 256 823-ը: Ապաքինվել է 466 152 753 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ հաստատվել է **82 954 768** դեպք: Այստեղ մահացածների թիվը **1 020 159** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **43 072 486**-ի, մահացածներինը՝ **523 753**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **30 418 920**, մահացել՝ **663 289** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **28 542 884**, վարակի հետեւանքով մահացել՝ **145 711** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Հ.Կորեան, Իտալիան ու Թուրքիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **422 865-ի**, մահացածներինը՝ **8 622-ի**, ապաքինվածներինը՝ **411 038-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը **792 521** է: Վարակից մահացել է **9 707,** ապաքինվել՝ **782 675** մարդ:

Վրաստանում, ապրիլի 29-ի դրությամբ, ողջ համավարակի ընթացքում վարակվել է **1 654 945,** մահացել՝ **16 807,** ապաքինվել՝ **1 636 800** մարդ:

*Ապրիլի 29-ին, կորոնավիրուսով վարակման **148** նոր դեպքերից **72-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 5, Իմերեթիում՝ 27, Քվեմո Քարթլիում՝ 8, Շիդա Քարթլիում՝ 4, Գուրիայում՝ 8, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 7, Կախեթիում՝ 11, Մցխեթա-Մթիանեթիում՝ 3, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 0, Սամցխե-Ջավախեթիում՝ 3:***

Ապրիլի 29-ի տվյալներով, մահացել է 2 մարդ:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՆՈՐ ԳԻՐՔ

«ԵՐԵՄԻԱ. ԼՍԵ'Ք ՉԱՅՆԸ»՝

ՄԵՐ ՀԱՄԵՐԿՐԱՅԻՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՄԱՅԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՄԲ

Երեւանի «Հոլիդեյ Ինն Երեւան» հյուրանոցում տեղի է ունեցել ավստրիացի հռչակավոր գրող, «Մուսա լեռան 40 օրը» վեպի հեղինակ Ֆրանց Վերֆելի (1890-1945) «Երեմիա. Լսե'ք Չայնը» գրքի հայերեն թարգմանության շնորհանդեսն ու գրքի ձեւավորման համար օգտագործված գրաֆիկական աշխատանքների ցուցահանդեսը:

Ընթերցողին հայտնենք, որ գիրքը լույս է տեսել նորերս Երեւանում, արմատներով Նինոծմինդայի մունիցիպալիտետի Գոնդուրա գյուղից Գրիգոր Մովսիսյանի ու նրա տիկին Նաիրա Կարապետյանի մեկենասությամբ եւ թբիլիսցի, այժմ՝ երեւանաբնակ, անվանի նկարիչ Մայիս Մխիթարյանի պատկերազարդումներով:

Վերֆելի այս հանրաճանաչ ստեղծագործությունը գերմաներենից հայերեն է թարգմանել Ուրուգվայի Հայոց թեմի առաջնորդ, գերաշնորհ Հակոբ արքեպիսկոպոս Գլնճյանը: Սա, հիրավի, այն դեպքն է, երբ փառահեղ գիրքը հանդիպել է իր խորագետ թարգմանչին՝ ոսկեղենիկ հայերենն իր ողջ համանվագի մեջ հնչեցնողին ու փայլուն պատկերազարդողին:

Օրհնության իր խոսքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, խոսելով այս արժեքավոր հրատարակության մասին, հստակ նկատել տվեց Ֆրանց Վերֆելի ձեռամբ ու Երեմիա մարգարեի շուրթերով գրքի գլխավոր պատգամը՝ ազգային ծեսերի եւ ավանդությունների հետ մեկտեղ հավատացյալ անձի առանձին կրոնական կապի կարեւորությունն իր Աստծու հետ հաղորդակցությունը:

Հակառակ պարագայում, մարդը չի հեռանալու իր մեղքերից, վերստին չի գտնելու իր Աստծուն, ուրեմն եւ շարունակաբար կրելու է իր պատիժները:

«Լսե'ք Չայնը» պարզապես գիրք չէ: Այն դեպի Աստված դառնալու կոչ է, հրավեր եւ պատգամ:

Ձախից՝ Մայիս Մխիթարյանը, Գրիգոր Մովսիսյանը եւ Վազգեն Սրբազանը

Շնորհանդեսին ներկա էին Հայաստանի եւ արտերկրից ժամանած մտավորականներ, արվեստագետներ, հոգեւոր ու աշխարհիկ ներկայացուցիչներ: Հյուրերի թվում էին Վրաստանից ժամանած Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի տնօրեն Լուիզա Խաչատուրովան, թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրյանը:

ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԳՆԱՀԱՏԱՆՔ

ՎՐԱՍՏԱՆԻ ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԵՑ ԵՌԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆ

Վրաստանի ռուսալեզու գրականագետների Պուշկինյան «Արիոն» ընկերությունն օրերս նշեց իր կազմավորման 30-ամյա, Վրաստանի ռուսալեզու լրագրողների Ասոցիացիայի նախագահ, ազգային փոքրամասնությունների ղեկավարների խորհրդի համակարգող, «Բազմազգ Վրաստան» թերթի եւ «На холмах Грузии» գրական ժողովածուի խմբագիր, Վրաստանի վաստակավոր լրագրող Միքայել Այդինովի ծննդյան եւ վերոնշյալ ժողովածուի 35-րդ համարի լույսընծայման հոբելյանները:

Տոնական երեկոյի մեկնարկին շնորհավորական խոսքով հանդես եկան Վրաստանի գրողների միության քարտուղար Մզիա Խեթագուրին, Թբիլիսիի սակրեբուլոյի ազգային փոքրամասնությունների խորհրդի ղեկավար Ռիտա Խիդիրբեգաշվիլին, ՏՎ-24-ի տնօրեն Բադրի Նաճղեբիան, Սուխումիի համալսարանի պրոռեկտոր Ինդիրա Չագանիան, Սուրբ Ալեքսանդր Նեւսկու եկեղեցու վանահայր Վլադիմիր Ալեքսանդրովը, «Վեչերնի Տբիլիսի» եւ «Վրաստան» թերթերի գլխավոր խմբագիրներ Վադիմ Անաստասիադին եւ Վան Բայբուրյանը, «Նադեժդա» միության նախագահ Իրինա Սվարչուկը, Բելառուսի դեսպանատան խորհրդական Ելենա Մալինովսկայան: Միքայել Այդինովին շնորհակալական խոսքեր ասվեցին «Արիոնի» բարգավաճման, վրաց արդի գրականության նմուշները ռուսերենով թարգմանություններին աջակցելու համար:

Նշենք, որ մի քանի գրքերի հեղինակ Միքայել Այդինովը՝ որպես լրագրող, իրեն հիանալի ներկայացրել է գրական-հրապարակախոսական տարբեր ժանրերում: 15 տարի նա միջազգային երիտասարդական «Թբիլիսի» ինստիտուտի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանն էր, ներկայումս դասախոսություններ է կարդում հրեական համալսարանում եւ լրագրողական վարպետության դասընթացներ վարում Վրաստանի ռուսալեզու լրագրողների ասոցիացիային առընթեր գործող հաստատությունում:

«Վրաստան» թերթը շնորհավորում է Միքայել Այդինովին ծննդյան հոբելյանի, ինչպես նաեւ նրա նախաձեռնությամբ ու ակտիվ մասնակցությամբ գործող «Արիոն» գրական միավորման եւ «На холмах Грузии» գրական ժողովածուի հոբելյանական տարեդարձերի առիթով, մաղթում քաջառողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՄԱՐԻԱՆՆԱ ԿԻՐԱԿՈԶՈՎԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԵՆ ԳԱԼԻՍ ՀԱՄԵՐԳՆԵՐՈՎ

Թբիլիսիի պետական կոնսերվատորիայում, ինչպես երաժշտական մյուս հաստատություններում, ուսումնական տարվա եզրափակումը նշանավորվում է հաշվետու համերգներով:

Ուսումնական հաստատությունների պրոֆեսորներն ու դասախոսները հանրության դատին են ներկայացնում ուսումնական տարվա ընթացքում իրենց դասընթացն անցած երիտասարդ երաժիշտներին: Նման մանկավարժներից է կոնսերվատորիայի շրջանավարտ, ջութակահարուհի Մարիաննա Կիրակոզովան:

Դեռ վերջերս Մարիաննա Կիրակոզովան մասնակցում էր պրոֆեսոր Նանա Լեսելիձեի դասական համերգային ծրագրին: Հաջորդ համերգը, որը Մարիաննայի համար մենահամերգային դարձավ, ԱՄՆ-ից ժամանած պրոֆեսոր Նանա Բաքրաձեի համերգն էր: Կոմպոզիտոր Դապնիսի դաշնամուրային քառյակում Մարիաննային՝ որպես առաջին ջութակ, նվագակցում էին ուսանողներ Լիաննա Խնիադաշվիլին, Էթերի Դոլիձեն, Աննա Անթելավան, Մալվինա Իսմայիլովան:

Հաջողություններ մաղթենք Մարիաննա Կիրակոզովային ու նրա գործընկերներին:

ԻՐԱԿԼԻ ՑԻՆՑԱՁԵ
Կոմպոզիտոր

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բարձրաստիճան պաշտոնյաները ծաղիկներ խոնարհեցին Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

Մեծ Եղեռնի 107-րդ տարելիցի կապակցությամբ հատուկ ուղերձներ հղեցին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանն ու Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Իսկ նախօրեին՝ ապրիլի 23-ին, Երեւանի Հանրապետության հրապարակից մեկնարկեց եւ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում եզրափակվեց ավանդական ջահերով երթը: Այն այս տարի կրում էր «Զարթնի'ր, լաո» խորագիրը:

Հայ ժողովրդի ձայնը լսելի դարձնելու եւ Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչմանը նվիրված երթն ամեն տարվա նման ավարտվեց Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին ծաղիկներ խոնարհելով:

Ջահերով երթը հայ ժողովրդի պահանջատիրությունը խորհրդանշող ամենամյա միջոցառում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿԵ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ապրիլի 28-ին Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունեց Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիվ եւ Գերերջանիկ Տեր Ռաֆայել Պետրոս Մինասյանին:

Հանդիպմանը Տեր Ռաֆայել Պետրոս Մինասյանը շնորհավորեց Վահագն Խաչատուրյանին նախագահի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ եւ մաղթեց արդյունավետ աշխատանք:

Հայաստանի նախագահը բարձր գնահատեց Հայ կաթողիկե եկեղեցու դերը՝ հատկապես ազգի ինքնության պահպանման գործում:

- Ձեր գործը մեծ նշանակություն ունի մեր ժողովրդի համար: Այն պատմականորեն միշտ մեկ նպատակ է հետապնդել՝ մեր տեսակը պահել, մեր ժողովրդին օգնել դժվարություններից դուրս գալ,- ասել է նախագահ Խաչատուրյանը:

Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս-Պատրիարքը, համակարծիք լինելով նախագահի հետ, նշեց, որ միայն համատեղ ջանքերով եւ միմյանց օգնելով է հնարավոր եղել առաջ շարժվել:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց ազգային-եկեղեցական հարցերին, ինչպես նաեւ Սփյուռքում մեր եկեղեցու դերի ու նշանակության կարեւորությանը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

Մայիսի 1-ից Հայաստան մուտք գործող քաղաքացիներից PCR թեստի բացասական պատասխան կամ պատվաստման հավաստագիր չի պահանջվի: Փոփոխությունը կվերաբերի ինչպես Հայաստանի, այնպես էլ՝ օտարերկրյա, այդ թվում՝ նաեւ Վրաստանի քաղաքացիներին:

Վրաստան մուտք գործելիս՝ Վրաստանի քաղաքացիներից եւս կորոնավիրուսի թեստի բացասական պատասխան կամ պատվաստումը հաստատող փաստաթուղթ չի պահանջվում:

Վրաստան մուտք գործելիս՝ Հայաստանի քաղաքացին պարտավոր է ներկայացնել 72 ժամ վավերության PCR թեստի բացասական պատասխան կամ պատվաստումը հաստատող փաստաթուղթ (պատվաստված անձանցից լրացուցիչ թեստ չի պահանջվի):

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունից ցամաքային ճանապարհով Վրաստան եւ հակառակ ուղղությամբ կարող են մուտք գործել Բագրատաշեն-Սադախլո եւ Բավրա-Նինոծմինդա սահմանային անցակետերով: Սահմանային անցակետերը գործում են ամեն օր՝ շուրջօրյա աշխատանքային ռեժիմով:

ԱՌԱՋԻՆ ԴԵՂԱՉԱՓՈՎ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ 50, ԻՍԿ ԵՐԿՐՈՐԴ ԴԵՂԱՉԱՓՈՎ՝ 44,1 ՏՈԿՈՍԸ

Հայաստանում պատվաստման առաջին դեղաչափ է ստացել քաղաքացիների 50 տոկոսը, ամբողջական պատվաստում են ստացել մեծահասակ քաղաքացիների 44,1 տոկոսը:

Այս մասին Հայաստանի կառավարության նիստին ասաց երկրի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ հավելելով, որ մոտ 50 հազար քաղաքացի ստացել է բուստեր դեղաչափը:

Նրա խոսքով, պատվաստումները հիվանդության բեռը նվազեցնելու առումով շատ կարեւոր դեր են խաղացել ամբողջ աշխարհում:

- Անկախ սահմանափակումների թուլացումից, մենք շարունակելու ենք բոլոր հնարավոր միջոցներով պատվաստումների խթանումը: Դրանք շարունակելու են հասանելի լինել պոլիկլինիկաներում, շարժական կետերում, տնային այցերի ձեւով: Վերջին մեկ շաբաթվա ընթացքում անգամ պատվաստումների ցուցանիշների մի փոքր աճ ունենք,- ընդգծեց նախարարը:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը կոչ արեց չթուլացնել զգոնությունը, քանի որ հենց այսօր Չինաստանում կան քաղաքներ, որոնք ապրում են լոքդաունի պայմաններում, եւ ոչ ոք չի կարող ասել, թե հաջորդ պահին ինչ տեղի կունենա:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԱՆԻՇԸ ԿԱՃՄԵԼ Է 9,6 ՏՈԿՈՍ

Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալներով, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022 թվականի հունվար-մարտին 9,6 տոկոսով ավելացել է, նախորդ տարվա հունվար-մարտի նկատմամբ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալն այս տարվա հունվար-մարտին, նախորդ տարվա հունվար-մարտի համեմատ, ավելացել է 3,1 տոկոսով:

Գյուղատնտեսական համախառն ներքին արտադրանքի ծավալը այս տարվա հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, նվազել է 5.4 տոկոսով:

Շինարարության ծավալը 2022-ի հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, ավելացել է 6,2 տոկոսով:

Առեւտրի շրջանառությունում հունվար-մարտին, 2021-ի մարտի նկատմամբ, ավելացումը կազմել է 7,6 տոկոս:

ԳԱԶԻ ԱՐՏՈՆՅԱԼ ԳՆԱԳՈՅԱՑՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ ՌԴ պաշտոնական այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել Հայաստանի համար գազի արտոնյալ գնագոյացումը:

Այդ մասին հայտարարեց Ռուսաստանի ԱԳՆ ԱՊՀ երկրների չորրորդ դեպարտամենտի տնօրեն Դենիս Գոնչարը:

- ՀՀ վարչապետի այցի շրջանակում, ստորագրվել է փաստաթղթերի պատկառելի փաթեթ, այդ թվում՝ էներգետիկայի ոլորտում համագործակցության վերաբերյալ: Ռուսական եւ հայկական համապատասխան գերատեսչություններն արդեն ձեռնամուխ են եղել պայմանավորվածությունների իրականացմանը: Պայմանավորվել ենք մեր հայ բարեկամների համար պահպանել գազի արտոնյալ գնագոյացումը,- ասաց Գոնչարը:

Ռուսաստանի ԱԳՆ-ի ԱՊՀ երկրների չորրորդ դեպարտամենտի տնօրենի խոսքով, «Գազպրոմ Արմենիա»-ն ծածկում է «երկնագույն վառելիքի»՝ երկրի պահանջարկի 80 տոկոսը:

- Հանրապետության տնտեսության մեջ «Գազպրոմ»-ի գծով ներդրումների ծավալը գերազանցում է 800 միլիոն դոլարը,- հավելել է Գոնչարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, Նյու Դելհում «Ռայսինայի երկխոսություն» համաժողովին մասնակցելու համար, աշխատանքային այցով գտնվում էր Հնդկաստանում:

Այցի շրջանակներում, ապրիլի 26-ին նա հանդիպում ունեցավ Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին ժամանակակից աշխարհի տարբեր մարտահրավերների հաղթահարման ուղիները եւ այդ առումով համագործակցության հնարավորությունները:

Հանդիպման ընթացքում Արարատ Միրզոյանը Նարենդրա Մոդիի հետ զրույց է ունեցել նաեւ հայ-հնդկական հարաբերությունների մասին:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ՝ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՇՈՒՐՋ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի հետ:

Նախարարները մտքեր են փոխանակել երկու երկրների առաջնորդների մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման շուրջ:

Կողմերը համաձայնության են եկել սահմանազատման եւ սահմանային անվտանգության հանձնաժողովի կառուցվածքի շուրջ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում սահմանազատման եւ սահմանային անվտանգության հանձնաժողովի վերաբերյալ հանդիպում անցկացնել:

Կողմերը քննարկել են նաեւ հումանիտար խնդիրների լուծման, ինչպես նաեւ խաղաղ բանակցությունների նախապատրաստման հետ կապված հարցեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՆԻՆ՝ ԿՈՒՅՐ ՀԱՄՏԵՍԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ

Երեւանում հայկական գինիների կույր համտես-մրցույթին մասնակցել են 43 հայկական գինեգործական ընկերություններ, որոնք ներկայացրել են իրենց գինիների 147 տեսակ:

Համտես-մրցույթը կազմակերպել է Հայաստանի խաղողագործության եւ գինեգործության հիմնադրամը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ:

Մրցույթի նպատակն է մշակել հայկական գինիների որակի ստուգման մեխանիզմներ, որոնց գործարկումը հնարավորություն կտա սահմանել որակական նոր չափանիշներ հայկական արտադրության բարձրորակ գինիների համար:

«Հայաստանի գինիներ» կույր-համտես երկօրյա մրցույթի ընթացքում 30 հոգուց բաղկացած համտեսող-գնահատողների հանձնաժողովը կիրականացնի փակ համտես, որի ընթացքում լավագույն հայկական գինիները, որոնք կհաղթահարեն անցողիկ 85 եւ ավելի միավորի շեմը, կստանան «Հայաստանի գինիներ» (Wines of Armenia) որակի հավաստման տարբերանշանը եւ կներկայացվեն Եվրոպայում գործարկված www.winesofarmenia.store հայկական գինիների առցանց վաճառքի միասնական հարթակում:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ - 182

ԲՈԼՆԻՍ-ԽԱՉԵՆՈՒՄ ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ, ՄԱՅԻՍԻ 1-Ի ՓՈԽԱՐԵՆ, ԿԱՆՑԿԱՑՎԻ ՄԱՅԻՍԻ 7-ԻՆ

Թերթի նախորդ համարում հաղորդել էինք, որ Բոլնիսի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչեն գյուղում Ղազարոս Աղայանին նվիրված ավանդական տոնը անցկացվելու էր մայիսի 1-ին, թեեւ տեղական իշխանությունների խնդրանքով, ավանդական տոնի անցկացումը հետաձգվել է եւ կանցկացվի շաբաթ օրը, մայիսի 7-ին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«B» ԵՎ «BE» ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ

B եւ BE կատեգորիաների վարորդական իրավունքի քննության գործնական մասը դարձել է երկփուլ:

Վրաստանի ներքին գործերի նախարարության սպասարկման գործակալությունը՝ ի կատարումն Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրով ստանձնած պարտավորությունների, Վրաստանի «Երթեւեկության մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն, 2022 թվականի ապրիլի 26-ից B եւ BE կատեգորիաների տրանսպորտային միջոցների ընդունելության թեստի գործնական մասը դարձրեց երկփուլ:

Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք ձեռք բերել ցանկացողները նոր չափորոշիչով գործնական թեստը կարող են հանձնել ՆԳ նախարարության սպասարկման գործակալության ինը կառուցվածքային ստորաբաժանումներում:

Գործնական քննության երկրորդ փուլը կանցկացվի Վրաստանի ներքին գործերի նախարարի հրամանով հաստատված քննական երթուղիներին համապատասխան: Յուրաքանչյուր քննական ծառայության համար մշակվել են մի քանի քննական ուղիներ:

Փոփոխությունների համաձայն, գործնական թեստավորման առաջին փուլը կանցկացվի փակ դաշտում, իսկ երկրորդ փուլը՝ իրական երթեւեկության պայմաններում:

Գերատեսչության տվյալներով, վարորդական իրավունքի թեկնածուն իրավունք ունի առաջին փուլը հաջողությամբ անցնելուց հետո, 365 օրացուցային օրվա ընթացքում, անցնել գործնական քննության երկրորդ փուլը: Բացի այդ, շահագրգիռ անձը գործնական քննության երկրորդ փուլ կընդունվի առաջին փուլը հաջողությամբ անցնելուց ոչ շուտ, քան 15 օր հետո: Վարորդի թեկնածուն կկարողանա նաեւ օգտվել արագացված ծառայությունից, որի արժեքը սահմանվել է 160 լարի, իսկ առաջին փուլը հաջողությամբ անցնելու դեպքում, 15 օր շուտ դուրս կգա երկրորդ փուլից:

ՆԳՆ-ից հայտնում են, որ գործնական քննության երկրորդ փուլն անցնելու համար անհրաժեշտ է, որ շահագրգիռ անձը հերթագրվի: Հերթեր կարելի է ամրագրել գործակալության կառուցվածքային ստորաբաժանման մեջ, ինչպես նաեւ գործակալության կայքի, բջջային հավելվածի կամ արագ վճարման տերմինալի միջոցով: Վարորդական թեկնածուն պարտավոր է գործնական քննության երկրորդ փուլին ներկայանալ հերթերի ամրագրմամբ նախատեսված ժամից 15 րոպե առաջ:

Համաձայն ներքին գործերի նախարարության տարածած հաղորդագրության, վարորդը պետք է մոտ 17 կմ ճանապարհ անցնի 25 րոպեում՝ պահպանելով ճանապարհային երթեւեկության կանոնները:

Նշենք, որ իրական պայմաններում վարորդական իրավունքի քննություն հանձնելը կլինի վճարովի: Վճարը կկազմի 90 լարի:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՄԱՔՍԻՄ ՎԱՀԱԳԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Նինոծմինդայի հասարակությունը մեծ կորուստ կրեց. երկրային կյանքին հրաժեշտ տվեց 92-ամյա Մաքսիմ Վահագի Արզումանյանը: Դեպքը, ցավոք, տեղի ունեցավ սիրասուն կնոջ մահվանից հաշված օրեր անց:

Մաքսիմ Արզումանյանը ծնվել էր Նինոծմինդայի (նախկինում՝ Բոգդանովկա) շրջանի Խոջաբեկ գյուղում:

Ծննդավայր Խոջաբեկի միջնակարգ դպրոցի, ապա՝ Երեւանի Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի, հետագայում եւ Բաքվի Բարձրագույն Կուսակցական դպրոցի շրջանավարտ էր:

Դեռեւս դպրոցական հասակից, աշխատանքի էր անցել շրջանային թերթի տպարանում նախ՝ որպես նամակատար ու գրաշար: Այնուհետեւ աշխատել էր նույն թերթի խմբագրությունում՝ որպես բաժնի վարիչ, պատասխանատու քարտուղար եւ խմբագրի տեղակալ: Հետագայում ընտրվել էր Կոմերիտշրջկոմի առաջին քարտուղար:

Որպես տեսուչ՝ աշխատել է Ախալքալաքիի շրջանի ժողկրթբաժնում, բաժնի վարիչ՝ Բոգդանովկայի կուսշրջկոմում, քարտուղար՝ շրջխորհրդի գործկոմում: Երկար տարիներ կարի-տրիկոտաժի ֆաբրիկայի, այնուհետեւ՝ պրոֆտեխուսումնարանի տնօրենն էր: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, աշխատել է Երեւանի «Պրոգրես» տնտեսահրավագիտական համալսարանի Նինոծմինդայի կոնսուլտկետում՝ որպես ուսումնական բաժնի վարիչ:

Աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո, արդեն ութսունն անց հասակում, լույս էր ընծայել իր երկու գրքերը՝ «Նինոծմինդայի (Բոգդանովկայի) շրջանը» եւ «Իրադարձություններ՝ ոչ միշտ ուրախ», որոնց մեջ նկարագրվում են շրջանի եւ Խոջաբեկ գյուղի կյանքի խորհրդային տարիների առանձին դրվագներ: Գրքերն ընդգրկում են ծավալուն վիճակագրական տեղեկություններ շրջանի մասին:

Մաքսիմ Արզումանյանը մեծ հեղինակություն էր վայելում շրջանի հասարակության համար: Ուշադիր եւ զգայուն էր բոլորի հանդեպ, նաեւ ազնիվ էր ու սկզբունքային: Բոլոր իրեն դիմողներին օգնում էր ամենայն պատրաստակամությամբ ու սիրով: Պատկառելի տարիքը երբեք չէր խանգարում նրան երիտասարդներիլավագույն ընկերն ու խորհրդատուն դառնալու համար:

Լույս իջնի շիրմիդ, սիրելի Մաքսիմ:

Գործընկերներ, հարազատներ

ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Պետություն Աֆրիկայում: 4.Վրաց հայտնի գրող Շոթա Ռուսթավելու գրական հերոսուհի: 8.Դաշտային գեղեցիկ ծաղիկ: 9.ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի փոխնախագահ, կոնգրեսական ... Շիֆ: 11.Ցուցական դերանուն: 12.Հանրահայտ դերասանուհի ... Թուխմանյան: 14.Դրախտ: 17.Բանկային համակարգ Հայաստանում: 18.Մեծ վիպասան Ռաֆֆու գրական հերոսուհի: 19.Պետրոս Դուրյանի բանաստեղծություններից: 21.Բրազիլացի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ: 24.Վրացական համեմունք: 25.Ալ.Շիրվանզադեի ստեղծագործություններից: 27.Հարավաֆրիկյան պետություն: 28.... Աստված: 30.Մա..., սե...: 31.«Ա՜խ, դու ..., հիմար ...» («Չարի վերջը»): 32.Հայաստանի ժողովրդական նկարիչ Հրանտ Թադեւոսյանի կեղծանունը: 34.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 36.«Հո՜ արա ..., ախպեր ջան» (ժող. երգ): 37.Քավորի մկրտածը: 38.Դեմքի մաս: 40.Կավե ջրաման: 41.Լճ..., սոխ..., բար...: 42.Բակլաազգի միամյա բույս: 43.Ստամբուլում լույս ընծայվող հայկական թերթ: 44.Լիճ Ասիայում, որին մեծության պատճառով ծով են անվանում: 46.Շառլ Ազնավուրի դուստրերից: 47.Կետադրական նշան: 49.Խաղաթուղթ: 52.Ընտանի թռչուն: 53.Վրաց երգչուհի ... Բրեգվաձե: 54.Բանջարանոցային բույս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հայ մեծ նկարիչ: 2.Նորվեգացի բեւեռախույզ, գիտնական, դիվանագետ Ֆրիտյոֆ ...: 3.Հայ գրող ... Մահարի: 5.Բոլնիս-Խաչենում ծնված հայ մեծ հեքիաթագիրը: 6.Թատրոնի եւ կինոյի հայտնի դերասանուհի Գալյա ...: 7.«Վրաստան» թերթի նախկին թղթակից, երեւանաբնակ, լուսահոգի Լեւոն ...: 10.Տնային ոտնաման: 13.Շար..., բեր..., վեր...: 15.Ախալքալաքիում ծնված հայ մեծ գրող Դեմիրճյան: 16.«Սասնա ծռեր» էպոսի հերոս: 20.Համադասական շաղկապ: 21.Բեմի ետնամաս: 22.Մեծ մայրցամաք: 23.Հայոց խելացի արքա: 24.Վրաստանի առողջապահության նախկին նախարարը: 26.Աֆրիկյան պետություն: 29.Հայկական զովացուցիչ ըմպելիք: 31.Արեւադարձային միրգ: 32.Շատ խիտ, ծառաշատ տարածք: 33.Մարմնի մաս: 35.Մուրացանի գրական հերոսուհի: 37.Ցուցական դերանուն: 39.Ժամանակի միավոր: 40.Երգիչ, շոումեն, դերասան ... Աղախանյան: 43.Հովհ.Թումանյանի գրական Բազազ հերոսը: 45.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 48.Հուլիոս Կեսար՝ «..., տեսա, հաղթեցի»: 49.Սա, ..., նա: 50.Ժխտական նախածանց: 51.Անորոշ դերանուն: 52.Յոթերորդ ձայնանիշը:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Պնդուկ: 8.Ագարա: 10.Սուրճ: 11.Ցար: 13.Գուսան: 14.Ադիդաս: 16.Կճուճ: 17.Ռուս: 19.Ճահիճ: 21.Նինո: 22.Կար: 23.Գայլ: 27.Նավթ: 29.Գավառ: 32.Գնա: 33.Բրա: 35.Ռասա: 36.Ցորեն: 37.Քնար: 39.Էքս: 42.Կտավ: 44.Պատանի: 46.Հարդ: 49.Ջահ: 50.Նոտա: 53.Կասաս: 54.Բայ: 55.Սեն: 56.Սանր: 57.Քար: 58.Կոնգ: 59.Ոսպ: 60.Տիկ: 61.Խաղ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ընդունակ: 2.Ճկուն: 3.Գաճաճ: 4.Կավիճ: 5.Բացառիկ: 7.Ուսադիր: 9.Ուր: 12.Ասուն: 15.Դուրյան: 18.Սոխ: 20.Հալվա: 24.Անգիր: 25.Լվացք: 26.Կռան: 28.Տրե: 30.Առոք: 31.Ասք: 33.Բրուտ: 34.Անիվ: 38.Առաջ: 40.Սիրանո: 41.Մահարի: 42.Կին: 43.Անտենա: 45.Տաբատ: 47.Ակա: 48.Դարս: 51.Ոսոխ: 52.Անգդ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ ՄՈՆԱՄԱՐՏՈՒ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎԱՀԱՐՇԱՎԱՆ Գ.
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445